«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՔԸ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Երևան, 2024

Հելսինկյան ասոցիացիան 2022 թվականին հանրության դատին հանձնեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մշտադիտարկման մասին Զեկույցը[1], որին ի թիվս վերլուծությունների ու եզրահանգումների, պարունակում էր հետևյալ առաջարկները՝

1. Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության (գործողությունների պլաններով) իրականացման աշխատանքներին կարևոր է հանրության լայն շրջանակներին ներգրավելը, առաջին հերթին՝ քաղաքացիական հասարակության ու մասնագիտական շրջանակների ներկայացուցիչներին:

2. Դատական և իրավական բարեփոխումներին հանրության մասնակցությունը խթանելու նպատակով կարևոր է միջոցներ ձեռնարկել հասարակության ընդհանուր իրավագիտակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Քննարկումներ անհրաժեշտ է իրականացնել նաև տեղական մակարդակով՝ ապահովելով հեռավոր համայնքների բնակիչների մասնակցությունը:

3. Անհրաժեշտ է ապահովել դատահիրավական բարեփոխումներին վերաբերող (և ոչ միայն) օրենսդրական նախագծերի պարտադիր հանրային քննարկումները խելամիտ ժամկետներում, իսկ հանրային լայն հետաքրքրություն ներկայացնող և/կամ առանձին խմբերի (մասնագիտական, սոցիալական, այլ) վրա ազդեցություն ունեցող նախագծերի դեպքում քննարկումներ կազմակերպել ոլորտային փորձագետների և շահագրգիռ խմբերի հետ:

4. Օրենսդրական նախագծերի մասնագիտական քննարկումներ անցկացնել նախագծի մշակման վաղ փուլերում՝ նախքան օրինագծի մշակումը: Այս համատեքստում արժե դիտարկել դրա հիմնական դրույթների և/կամ հայեցակարգի մշակումն ու քննարկումը:

[1] https://hahr.am/%d5%a6%d5%a5%d5%af%d5%b8%d6%82%d5%b5%d6%81%e2%80%a4-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%b6%d6%80%d5%a1%d5%ba%d5%a5%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%a4/

Սույն Ամփոփագիրը մասնավորապես ներկայացնում է կազմակերպության կողմից նախորդ երկու տարիներին իրականացված հատկապես քրեական գործերով (վարույթներով) նիստերի մշտադիտարկման արդյունքում ստացված տեղեկություններն ու տվյալները: Բացի սրանից՝ տեղ են գտել նաև բաց աղբյուրներում առկա վերաբերելի տեղեկություններ:

Հայաստանի Հանրապետությունում առաջին դատաիրավական բարեփոխումները իրականացվել են 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններին հաջորդել է դատաիրավական բարեփոխումների երկու ռազմավարությունների ընդունումը. առաջինն ընդգրկել է 2009-2011 թվականները, երկրորդը՝ 2012-2016 թվականները, որի ժամկետը երկարաձգվել է մեկ տարով՝ մինչ 2017 թվականի ավարտը[2]:

Դատաիրավական բարեփոխումների ընդունված ռազմավարություններն ինքնին չհանգեցրին նրան, որ դրանց իրականացման արդյունքում Հայաստանում բարձրացավ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը կամ դատարաններում վերացավ կոռուպցիոն երևույթները:

2019 թվականից հետո նախաձեռնված Հայաստանի Հանրապետության դատական բարեփոխումների ռազմավարությունում նախատեսվեցին արմատական փոփոխություններ դատական համակարգի արդյունավետության, անկախության և դատական իշխանությունում կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառներում: Հասկանալիորեն բարեփոխումների ընթացքը չի կարող սահմանափակվել որոշակի ժամանակահատվածով և այն պետք է մշտապես շարունակական բնույթ կրի:

Վերջին երկու տարիների ընթացքում դատական բարեփոխումներից հատկապես նկատելի են՝

ա) «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում (հատկապես նկատելի է քաղաքացիական և քաղաքացիական դատավարության ոլորտում),

բ) Քրեաիրավական ոլորտում,

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851

գ) Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը (նկատելիորեն ազդել է հատկապես քաղաքացիական դատավարության ոլորտի վրա),

դ) դատարանների շենքային պայմանների բարելավումները ու դատավորների և աշխատակազմերի թվաքանակի ավելացումը:

Այս աշխատանքների հիմնական մասը բխում են Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրից, ինչը հաստատվել է ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշմամբ[3]:

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարությունից բխող գործողությունների ոլորտները ըստ նպատակների 12-ն են («Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում (1), Անցումային արդարադատության գործիքների կիրառում՝ փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտմամբ (2), Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում (3), Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում (4), Քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ (5), Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում (6), Վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխում (7), Սնանկության ոլորտի բարեփոխումներ (8), Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում (9), Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներ (10), Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ (11), Ռազմավարական այլ ուղղություններ (12)), և դրանցից գրեթե կեսի դեպքում առկա են տեսանելի և շոշափելի բարեփոխումներ: Մի մասում արդյունքները դեռևս տեսանելի չեն, և ակնկալվում է, որ առաջիկա երկու տարիների ընթացքում մենք կարող ենք արձանագրել ռազմավարությունից բխող գործողությունների ոլորտների նպատակների կատարումը:

Միաժամանակ պետք է նկատել, որ վերջին երկու տարիների մշադիտարկման արդյունքում էական առաջընթաց չի նկատվել կազմակերպության նախորդ Զեկույցով ներկայացված առաջարկների կյանքի կոչման հարցում: Այս հանգամանքը կարևորվում է

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166582

հատկապես նրանով, որ մեր հասարակության յուրաքանչյուր անդամ հանդիսանում է արդարադատության շահառուն, իսկ հարգանքն ու վստահությունն արդարադատության նկատմամբ անչափ կարևոր է, և դրան պետք է հասնել նաև մասնակցության ապահովման միջոցով։

Իրականացված և ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների արդյունքներն զգալիորեն նկատելի կարող են դառնալ, եթե ձևական (ֆորմալ) բնույթ չկրեն և որոշ գործողություններ չիրականացվեն մակերեսորեն։

Որպես խնդրահարույց և առավելագույնս հրատապ կարգով լուծում պահանջող խնդիր հատկապես նկատելի է գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումները։ Այս հանգամանքը ոլորտի առանցքային խնդիրներից մեկն է հանդիսանում։ Խնդրի առկայությունը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով։ Վերջին տարիներին հատկապես խնդիրը զգալի դարձավ որպես բարեփոխումների «հետևանք», երբ դատավորների տեղափոխությունները կամ համակարգից նրանց դուրս գալը կամ նոր նշանակումներ (առաջխաղացում) ստանալը հանգեցրին նրան, որ հատկապես քրեական վարույթներով քննված գործը նոր վարույթ ստանձնած (ընդունած) դատավորն սկսեց այն քննել նորից, ինչն էլ հաճախ հանգեցրեց գործի քննության ողջամիտ ժամկետի խախտմանը։

Իսկ եթե այս ամենը դրսևորվում է անձի կամ անձանց կալանքի տակ գտնվելու պայմաններում, ապա պարզ է դառնում, թե որքան կարևոր է խնդրի լուծման հրատապությունը։

Գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման պատճառ է նաև դատարանների (դատավորների) գերծանրաբեռնվածությունը։ Դատավարական օրենսգրքերի հսկայածավալ փոփոխություններն ու նորամուծությունները (օրինակ՝ գրավոր կամ պարզեցված կարգով լսումները/վարույթները) որոշակիորեն լուծել են խնդիրը, սակայն այն դեռևս բավարար չէ։

Իր հերթին դատարանների գերծանրաբեռնվածության և գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման պատճառ է դառնում նաև, օրինակ, դատախազության (հանրային մեղադրողի) կողմից դատական ակտերի բողոքարկումն անգամ այն դեպքերում, երբ առերևույթ դրա իրավական անհրաժեշտությունը չկա կամ դատարան է դիմում գործով տուժողը, և դատարանը բավարարում է տուժողի բողոքն ընդդեմ դատախազության։

Փաստացի, ունենում ենք մի իրավիճակ, որտեղ ֆորմալ առումով նույն՝ մեղադրական կողմ հանդիսացող սուբյեկտներից մեկն իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար ստիպված է լինում դիմել դատարան, իսկ մյուս սուբյեկտը՝ դատախազությունը, դատական կարգով շարունակաբար բողոքարկում է գործով տուժողի իրավունքները վերականգնելու մասին դատարանի հիմնավոր, պատճառաբանված դատական ակտը՝ այդպիսով լրացուցիչ ծանրաբեռնելով դատարանները։

Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման ուղղակի հետևանք է նաև վաղեմության հիմքով գործերի կարճումը, որն իր մեջ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում։

Հատկապես անհագստացնող է նույն ծանրաբեռնվածություն ունեցող դատավորների մի դեպքում «արագացված ընթացքով» գործերի լսումների ֆոնին մեկ այլ դատավորի երկու-երեք ամիսը մեկ նշանակվող, անընդհատ չեղարկվող դատական նիստերի փաստը, որին հաջորդում է վաղեմության հիմքով գործի կարճումը։

Որակյալ լիցենզավորված թարգմանիչների բացակայությունը հատկապես Երևան քաղաքից դուրս՝ մարզերում, ևս խիստ անհանգստացնող է։ Հատկապես կարևորում ենք Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ազգային լեզուներին տիրապետող լիցենզավորված թարգմանիչների թվաքանակի ավելացումը։

Թեպետ էականորեն բարելավվել է, սակայն շարունական խնդիր է արձանագրվել Դատալեքս տեղեկատվական համակարգի թե՛ հասանելիության, թե՛ թերի տեղեկատվության առկայության կամ բացակայության/մեծ ուշացումով տեղադրման հետ։

Եվ վերջապես, արդարադատության մատչելիության և իրավական աջակցություն ստանալու տեսանկյուններից փաստաբանների ծառայությունները նոր հարկերով ծանրաբեռնելն ուղղակի բացասական ազդեցություն է ունենալու այդ ծառայություններից օգտվող ՀՀ քաղաքացիների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հարցում։ Հաշվի առնելով, որ 2021 թվականին էականորեն բարձրացվեցին դատարան դիմելու համար նախատեսված պետական տուրքերի[4] դրույքաչափերը, ապա լրացուցիչ հարկերը

[4] Օրենքի փոփոխությամբ պետական տուրքի նվազագույն չեմը 1.500 դրամից դարձավ 6.000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար գործող 4.000 դրամ պետական տուրքը՝ 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքների համար սահմանված պետական տուրքը 10.000 դրամից՝ 30.000 դրամ, վճռաբեկ բողոքների դեպքում՝ 20.000 դրամից 40.000 դրամ,

բարձրացված տուրքերի հետ համակցության մեջ խիստ խոցելի է դարձնում արդարադատության մատչելիության սկզբունքը։

Ինչպես և պետական տուրքերի դրույքաչափերի բարձրացումը, ինչը հիմնավորվում էր որպես դատարանների բեռնաթափում ու դատական իշխանության համար լրացուցիչ ֆինանսական մուտքերի ավելացում, երբ իրականում ստացանք հակառակ պատկերը, և դատարանները շարունակվում են մնալ ծանրաբեռնված, այնպես էլ փաստաբանների ծառայությունները նոր հարկերով ծանրաբեռնելը որևէ աղերս չունեն իրավապաշտպանության ու մարդու իրավունքների հետ։ Այս ամենի տնտեսական բաղադրիչը ևս չափազանց աննշան (աննկան) է լինելու պետական բյուջեի համար, հետևապես կրկին արձանագրելու ենք մարդու հիմնարար իրավունքների խախտումների փաստ հանրային իշխանության կողմից։

Դատական իշխանության խնդիրների ինստիտուցիոնալ լուծման հիմնական կառույց Բարձրագույն դատական խորհրդի կազմի և կայացրած որոշումների նկատմամբ մասնագիտական համայնքը ցուցաբերել է ոչ միանշանակ մոտեցում։ Բազմաթիվ նշանակումներ ԲԴԽ-ում, վճռաբեկ դատարանում, որոշ դատավորների համակարգից հեռացումները և/կամ սեփական դիմումով ազատումները եղել են ոչ թափանցիկ, դարձել են մեծ շահարկումների առարկա, ինչն էլ ստվերել է ԲԴԽ-ի աշխատանքն ու ոլորտի բարեփոխումների ընթացքը։

2022 թ. հուլիսից մինչև 2024 թ. մարտ ընկած ժամանակահատվածում «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ներկայացրել է մարդու իրավունքների խախտումների զոհերի (տուժողների) 21 քրեական գործ Հայաստանի ազգային դատական համակարգի բոլոր մակարդակներում։

Այս դեպքերը վերաբերում են բանակում ոչ մարտական պայմաններում զոհերին (կյանքի իրավունք), ոստիկանությունում խոշտանգումների դեպքեր (խոշտանգումներից զերծ մնալու իրավունք), ընտանեկան բռնություն (գենդերային հավասարություն), ԼԳԲՏԻ անձանց

իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար նախատեսված 500.000 դրամ պետական տուրքը՝ 1.000.000 դրամ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար գործող 2.000 դրամը՝ 20.000 դրամ և այլն։ Միաժամանակ վերացվեցին պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ։

իրավունքների խախտումներ (գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման իրավունք), արդար դատավարություններ և դատական պաշտպանության իրավունք (արդար դատավարության իրավունք), ինչպես նաև ՀՀ-ում ապաստան փնտրող օտարերկրյա փախստականների հետ կապված գործեր (ապաստանի իրավունք)։

Անցած երկու տարիների ընթացքում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 184 քրեական գործով մշտադիտարկվել է ընդհանուր առմամբ 568 դատական նիստ։

Զուգահեռաբար հարցազրույցներ են անցկացվել 60-ից ավելի անձանց հետ, ովքեր ներգրավված են մարդու իրավունքների ոլորտում և դատական գործերում (առավելապես փաստաբաններ ու իրավապաշտպաններ)։ Այդ հարցազրույցները վերաբերում էին այնպիսի թեմաների, ինչպիսիք են իրավական և դատաիրավական բարեփոխումները, հակակոռուպցիոն և գերագույն դատարանների ստեղծումը, Դատալեքս տեղեկատվական համակարգի աշխատանքի կանոնավոր խախտումները, լիցենզավորված թարգմանիչների բացակայությունը, դատական բարեփոխումների ընդհանուր ընթացքը, դատական վարույթների պարզեցված ընթացակարգը, զոջման հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, ընտրովի արդարադատությունը, արդար դատաքննության խոչընդոտները, վեթինգի իրականացումը, եկամտային հարկի շեմի բարձրացումը, այլն։

Միջին հաշվով ամսվա ընթացքում շուրջ 100 անհատ կամ իրավաբանական անձ (նախկինում նույն ժամանակաընթացքում՝ 80-85 մարդ) ՀՀ բոլոր մարզերից դիմել են Հելսինկյան ասոցիացիա իրավաբանական օգնություն ստանալու նպատակով, ինչը վկայում է շարունակաբար աճող իրավաբանական աջակցություն ստանալու անհրաժեշտության մասին։

Մեր կենտրոնում քաղաքացիների ու կազմակերպությունների կողմից իրավաբանական օգնություն ստանալու աճող շարունակաբար դինամիկան ընդգծում է մարդու իրավունքնրի ու արդարադատության ոլորտում բազմաթիվ խնդիրների առկայությունն ու բարեփոխումների հրատապությունը։

Ստանձնած գործերի (վարույթների) 35 տոկոսը կամ յուրաքանչյուր երրորդը հաջողությամբ լուծվել է քաղաքացու կամ կազմակերպության խախտված իրավունքը

վերականգնվել է, ինչը թեև Հելսինկյան ասոցիացիայի համար լավ արդյունք է, սակայն բավարար չէ։ Եթե դեռևս առկա է գեթ մեկ անձի խախտված և չվերականգնված իրավունք, նշանակում է, որ ոլորտում առկա է չլուծված խնդիր։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հելսինկյան ասոցիացիայի գործունեությունը նպատակաուղղված է նաև հասարակության իրավական գիտելիքների և իրազեկվածության բարձրացմանը, բնականաբար մեր մշտադիտարկումների դաշտում իր տեղն ունեն մասնավորապես՝ ատելության խոսքի, կեղծ լուրերի և լրատվամիջոցների մանիպուլյացիաների տարածման հանգամանքները։ Որոշ լրատվական գործակալությունների կախվածությունը պետական հովանավորչությունից հաճախ հանգեցնում է տեղեկատվության մանիպուլյացիայի և անհարկի քաղաքականացման՝ խաթարելով արդարացի քննադատությունն ու դատողությունը։ Հելսինկյան ասոցիացիան իր համեստ և խիստ սահմանափակ հնարավորություններով ջանում է լրացնել այս բացը՝ մեծացնելով հանրային ներգրավվածությունը և աջակցելով ազատ և անկախ լրատվամիջոցների գործունեությանը։

Ափսոսանքով պետք է նշենք, որ անցած ժամանակահատվածում շարունակական բնույթ կրեցին խոշտանգումների և հանցագործությունների մասին հաղորդում տված տուժողների դեմ ուղղված սպառնալիքների մարտահրավերները։ Իրավապահ մարմինների որևէ պաշտոնյա չի դատապարտվել (ենթարկվել քրեական պատասխանատվության) խոշտանգումների համար, իսկ զոհերը (տուժողները) հաճախ ճնշումների են ենթարկվել բողոքները հետ կանչելու համար։

Չնայած այն փաստին, որ Հելսինկյան ասոցիացիան գրանցել է նշանակալի հաջողված պատմություններ, ներառյալ տարբեր ատյանների դատարանների կողմից տուժողների համար բարենպաստ դատական ակտերի կայացումներ ու Եվրոպական դատարանի որոշումները, այդուհանդերձ հաստատապես պնդում ենք, որ պետք է իսպառ վերացվի բռնության որևէ դեպք՝ հատկապես պաշտոնյաների կողմից, իսկ լինելու դեպքում՝ հրատապ, անաչառ և արդար քննությունը պետք է լինի պետական ինստիտուտների առաջնահերթ խնդիրը։

Վերոգրյալի լույսի ներքո, որպես իրավապաշտպան կենտրոն կարևոր ենք համարում նշել հետևյալը՝ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների

ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի 2-րդ նպատակը՝ Անցումային արդարադատության գործիքների կիրառում՝ փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտմամբ, նախատեսում է հետևյալ վերջնական արդյունքը՝

«Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները զանգվածային խախտումների դեպքերը և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունները հնարավորինս բացահայտված են»,

3-րդ նպատակը՝ Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում, նախատեսում է հետևյալ վերջնական արդյունքը՝

«Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտները առավելապես զարգացած են՝

- Սահմանադրաիրավական կառուցակարգերը վերանայված են և դրական ազդեցություն են ունեցել անձանց իրավունքների պաշտպանության, պետական իշխանության կազմակերպման և գործունեության վրա
- Ընտրական օրենսդրությունը վերանայվել է, և ամրապնդվել են անձանց ընտրական իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքները»։

Մինչ օրս այս նպատակների կատարման առումով շոշափելի քայլեր չեն կատարվել, ընդ որում՝ նույնաբովանդակ նպատակներ սահմանված են եղել նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների նախորդ ռազմավարության մեջ, որը թողնվել է անկատար։

Որպես իրավապաշտպան կենտրոն՝ մենք համոզված ենք, որ ՀՀ-ում մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումները չեն կարող շրջանցել կամ հետին պլան մղել նախկինում թույլ տրված զանգվածային խախտումները, և այս առումով անչափ կարևոր է մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեպքերը և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունները առավելագույնս բացահայտելուն ուղղված միջոցառումներն ու գործողությունները, որոնք արդեն 5 տարի է չեն կատարվում։ Այս ոլորտի (ռազմավարական նպատակի) իրական արդյունքը դատական իշխանության նկատմամբ վստահության ու հավատի բարձրացման լավագույն ցուցանիշներն ու խթանը կարող են հանդիսանալ։

Նույնը վերաբերում է Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում նպատակի կատարմանը, որի կապակցությամբ ևս պետք նշել, որ դեռևս առկա չեն շոշափելի արդյունքներ։

Որպես ամփոփում ցանկանում ենք նշել, որ թեև Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի նպատակների կատարման համար դեռևս ունենք երկու տարի ժամանակ, սակայն արդեն իսկ մտահոգիչ է որոշ նպատակների կատարման իրատեսական լիները, ինչպիսիք են օրինակ՝ 2-րդ և 3-րդ նպատակները։

Օրինակ՝ ռազմավարության 2-րդ նպատակի կատարումն ապահովելու համար նախատեսված էր, որ 2023 թվականի 2-րդ կիսամյակում կձևավորվի փաստահավաք գործառույթներ իրականացնող մարմին, ինչը չի կատարվել մինչ օրս և դրա կատարումը մշուշոտ է։

Նմանապես մշուշոտ է ռազմավարության 3-րդ նպատակի կատարումը։ Այսպես՝ դեռևս 2022 թվականի 4-րդ եռամսյակում Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից պետք է ներկայացվեր Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակված նախագիծը իսկ 2023 թվականի 2-րդ եռամսյակում պետք է մշակված լիներ Սահմանադրական բարեփոխումների նախագիծը։ Այս աշխատանքները ևս չեն կատարվել։

Միաժամանակ պետք է նկատել, որ նախկին ռազմավարության կատարման օրինակով աշխատանքների զգալի մասը կատարվում է առանց հանրության լայն մասնակցության, իսկ մարզային շրջանակների մասնակցության մասին որպես կանոն կարելի է նաև չխոսել։

Սույն ամփոփագիրը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) ֆինանսավորմամբ՝ «Մարդու իրավունքների վրա հիմնված դատական համակարգի ստեղծում ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում։ Ամփոփագրի բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) տեսակետներին։